ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե-2-9074

« 29 » հոկտեմբերի 2021թ.

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Է. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ 3-րդ չափաբաժնի մասով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ (eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից անգործության ժամկետ չի սահմանվել):

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/25» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788